

The image shows the front cover of an old book. The cover is decorated with a complex marbled pattern in shades of blue, grey, and dark red, with irregular, organic shapes. A dark, possibly black, spine is visible on the left side. A small, rectangular, off-white paper label is affixed to the bottom left of the cover. The label is divided into two horizontal sections by a thin line. The top section contains the handwritten word 'Lamy' in a cursive script. The bottom section contains the handwritten number '412,413'. There is a small, irregular piece of yellowish paper or tape partially overlapping the bottom right corner of the label.

Lamy

412,413

257

2000

1) *Entylia* *quadrifida* 2/18  
h. l. *Sumo* 4/18 4/18 4/18 4/18  
2) *2/18* h. l. *Sumo* 4/18 4/18

117

1599

ԿԵՍՆԻՐԸ ԱՌԱՋ ԵՒ ԱՅԺՄ

Հայաստանի Տեղագրական Տարածքաբանության  
Կուսակցության Գ. Գ. - Կ. Գ.

Լսւ  
413

1905 թ.

Հ Ի Ն

# ՀՈՒՎՍԱՅԵՑՈՑ ՏՈՆԵՐԸ

Թարգմանումին ուսերէնից



ԲԱԳՈՒ

Տ Պ Ա Ր Ա Ն «Ա Ր Օ Ր»

1898.

4805

ԿԵԱՆՔԸ ԱՌԱՋ ԵՒ ԱՅԺՄ

Հին Հռոմէացեցիների հանդիսները եւ սօները  
կայսրութեան ժամանակներուն:

Дозволено цензурою. Тифлисъ, 22 Апрелья 1898 г.

Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի ժամանակ—երբ նա ծնեց, մեծացաւ, քարոզեց, շարժարեց եւ վերջապէս մեռաւ խաչի վրայ—ամենաուժեղ ազգը հռովմայեցիք էին: Հռովմէական պետութիւնը նւաճեց այն ժամանակաւ բոլոր յայտնի երկրները եւ նւաճած տեղերում կառավարիչներ նշանակեց: Հրէաստանն եւս գտնուում էր Հռովմի գերիշխանութեան տակ եւ նրա մայրաքաղաքում — Երուսաղէմում նստում էր

28-42

413-2004

հռովմայեցի կուսակալ, Պօնտայի Պի-  
ղատոսը: Հրէաները սրա մօտ բերին  
Քրիստոսին, իբրև յանցաւորի, և սրա  
թոյլուութեամբ այն ժամանակւայ ա-  
նարդ պատժին ենթարկեցին—խաչե-  
ցին:

Հռովմէական տէրութիւնը այն ժա-  
մանակ 700 տարուց աւելի էր, որ դոյ-  
ութիւն ունէր: Հռովմայեցիք իսկզբանէ  
երկրագործ ժողովուրդ էին. իրանք  
էին մշակում հողը, կենդանիներ պա-  
հում, պարապում ամեն տեսակ՝ իրանց  
հարկաւոր արհեստներով և առհասա-  
րակ չէին խորշում ոչ մի օգտակար  
աշխատանքից: Եւ հարուստը, և աղ-  
քատը, և նշանաւոր մարդը, և հասա-  
րակը վարում էին հողը և պատահում  
էր, որ հռովմայեցին թողնում էր իւր  
գութանը և գնում կառավարչի կամ  
զօրքերի առաջնորդի ծանր պաշտօնը  
կատարելու:

Բայց հռովմայեցիք որքան շատ  
երկրներ էին տիրապետում, որքան շատ  
էին հարստանում պատերազմով և ա-  
ւարով, այնքան աւելի ու աւելի նրանց  
կեանքը փոփոխուում էր: Իւրաքանչիւր  
պատերազմից յետոյ, բացի աւարից,  
նրանք օտար երկրներից բերում էին  
սարուկ—գերիներ և նրանց վրայ ձը-  
գում ծանր աշխատանքները:

Հռովմէական ժողովուրդը փոքր առ-  
փոքր կորցնում էր աշխատելու ընդու-  
նակութիւնը և ամեն մի աշխատանք,  
նոյն իսկ ամենաթեթիւը, ստոր և ամօ-  
թալի համարում: Ստրուկները կատա-  
րում էին բոլոր գաշտային ու տնային  
աշխատանքները, նրանց ձեռին էին և  
արհեստները: Իսկ հռովմայեցիք թող-  
նելով իրանց հողերը, գիւղերը,  
ձգտում էին գիպի քաղաքները և  
գլխաւորապէս հռովմէական պետու-  
թեան մայրաքաղաք Հռովմը: Ի հար-

կէ, հռովմայեցիք ամենքն էլ հարուստ չէին. ամենքն էլ չունէին սարուկներ, որ իրանց փոխարէն աշխատէին: Ուրեմն ինչպէ՞ս էին ապրում չքաւորները. Թասնեակ հազար հռովմայեցիներ աղքատ, նոյն իսկ մուրացիկ կեանք էին վարում. ողորմութիւն խնդրելով էին հայթայթում իրանց աղքատիկ պարէնը և զանազան հանդէսներով զւարճանում: Առաջւայ ժամանակներում տօները և հանդէսները հռովմայեցոց համար ծառայում էին իբրև հանգստութիւն, և տօն օրերը շատ չէին: Իսկ այժմ երբ հռովմէական ժողովուրդը իրան ամբողջ աշխարհի տէր համարեց, երբ իւր փոխարէն սկսեց հարիւր հազար սարուկներ աշխատեցնել, տօները և հանդէսները նրա գլխաւոր և միակ զբաղմունքն եղան: Ազմկալից տօները, ճրի հիւրասիրութիւնը և տուրքերը մոռացնել էին տալիս նրան այն ամօթն ու

կսկիծը, որ ինքը լինելով երբեմն առողջ, աշխատասէր ազգ, այժմ դառել է փչացած, մեղկ, անգութ ու պարապ, կուպիտ և մուրացիկ ժողովուրդ՝ առանց հացի ու ապաստարանի: Միմիայն Հռովմ քաղաքում այդպիսի պարապ ու քաղցած մարդկանց թիւը մի միլիօնից աւելի էր:

Հռովմէական մատենագիրները և քրիստոնէական եկեղեցու հայրերը թողել են մեզ հռովմայեցոց կեանքի մանրամասն նկարագրութիւնը: Ահա թէ ինչեր են պատմում նոքա կաթիկուրսի, Ներոնի և նոյա յաշորդ կայսրների ժամանակներում Հռովմում կատարւած տօների մասին:

Հանդէսներ և ուրախութիւններ հռովմայեցիք տալիս էին ի պատիւ գլխաւոր հեթանոսական աստուածների: Բացի դրանից հանդէսներ տրւում էին թշնամիների վրայ յաղթանակ տանե-

լիս, տաճարներ օծելիս, կայսեր ծննդեան օրը, կամ երբ որևէ բարձրատիճան մարդ շահաւէտ պաշտօն էր ստանում: Վերջին դէպքում հանդէսը լինում էր նրա սեպհական հաշուով, և ոչ թէ գանձարանի: Առաջ տօն օրերի թիւը 66 էր, իսկ յետոյ հետզհետէ աւելանալով՝ հասաւ մինչև 175-ի: Լինում էին և այնպիսի տարիներ, երբ առանձնապէս շքեղ և երկարատև հանդէսներ էին կատարւում: Օրինակ, Տրայանոս կայսրը իւր մէկ յաղթութիւնը տօնեց 123 օր շարունակ: Հասկանալի է, թէ որքա՛ն թանգ պէտք է նստէին այդ ուրախութիւնները. նրանց վրայ օրական 15 հազար մանէթից աւելի էր ծախսւում: Կալիկուլոս կայսրը այդ խաղերի վրայ իննը ամսուայ ընթացքում ծախսեց 165 միլլիօն մանէթ: Խաղերը կատարւում էին մի որոշեալ տեղում, յատկապէս դրանց հա-

մար կառուցւած շինութիւններում: Այդ շինութիւնները չունէին ոչ յատակ և ոչ տանիք, այլ միայն բարձր պատեր, որոնց վրայ քարից ու աղիւսից շինում էին նստարաններ և առանձին տեղեր հանգիստեանների համար: Այդպիսի բոլորակ կամ երկայնաձև շինութիւնը կոչւում էր կրկէս և կարող էր պարունակել մինչև 380 հազար հանդիսատես, իսկ հրապարակում— հարիւրաւոր ձիեր, զանազան կենդանիներ, ծառաներ և մարտնչողներ: Երբեմն էլ հրապարակը լցնում էին ջրով և նաւերով ու մակոյկներով ծովային պատերազմներ էին տալիս:

Հանդէսը սովորաբար սկսւում էր լուսաբացին և վերջանում արևը մայր մտնելու ժամանակ:

ԿԱՌԱՐՇԱԻ

Ամենասիրելի խաղերից մէկը կառարչաւն էր: Միանւագ ասպարէզ էին դուրս գալիս չորս կառք: Կառքերը, ձիերի սարքը և կառապանների զգեստը զանազան գոյնի էին լինում: Կարմիր, կապոյտ, սպիտակ և կանաչ: Իւրաքանչիւր կառքի չորս ձի էր լինում լծւած. կառապանը կանգնած էր վարում: Ով որ եօթն անգամ առաջ ու յետ գնար ասպարէզի ամբողջ երկարութեամբ և ամենից շուտ վերագառնար այն տեղը, որտեղից դուրս էր եկել, յաղթող էր հանդիսանում և ստանում էր առաջին մրցանակը: Հռովմայեցիք սկզբում անպատւաբեր էին համարում ասպարէզ դուրս գալը. կառապանների պաշտօնը կատարում էին վարձկանները կամ

ստրուկները: Բայց յետոյ այդ խաղը այն աստիճան գրաւեց, որ կառքերով սկսեցին արշաւել ամենաերևելի հռովմայեցիները և նոյն իսկ կայսրները: Կառապաններին մեծ փողեր էին տալիս. նրանցից ամենալաւերի անունները յայտնի էին ամբողջ երկրում. նրանց պատուին արձաններ էին կանգնում: Բայց յատկապէս շատ էին ծախսում ձիերի վերայ: Լաւ ձին հռովմայեցու համար իւր սեպհական որդիներից թանգ արժէր: Մէկ ուրիշը իւր ամբողջ կարողութիւնը վատնում էր ձիերի վրայ: Արշաւող ձիու սովորական գինը 1500 մանէթ էր. իսկ եթէ ձին մի քանի անգամ աչքի էր ընկնում խաղերի մէջ, չափազանց թանգ էր գնահատուում: Արշաւող ձիերի համար առանձին ակոսներ էին շինում և առանձին եղանակով կերակրում նրանց: Կալիկուլոս կայսրը մի ջուկ պալատ շինեց իւր սիրելի ձիու համար: Նա ինքը

յաճախ հիւր էր գնում ձիու մօտ և ստիպում էր երևելի հռովմայեցիներին գնալ իւր ձիու մօտ և երկրպագութիւն տալ նրան: Իսկ երբ ձիուն ճաշի էր հրաւիրում իւր արքունիքը, հիւրին ոսկէ ամաններով վարսակ և ջուր էին տալիս: Այդ ժամանակ Հռովմ. քաղաքում 400,000 արշաւող ձի կար:

Ոչ միայն հանդիսի ժամանակ, այլ և մի հանդիսից մինչև միւսը խօսակցութեան նիւթը հէնց միմիայն ձիերն ու կառապաններն էին: Կայսրից սկսած մինչև վերջին ստրուկը՝ կին թէ տղամարդ, հարուստ թէ աղքատ խաղերի մասին էին խօսում և վիճում, թէ որ կառքը կը յաղթէ, — կապոյտը, թէ կանաչը: Նոյն իսկ կայսրները մերթ կանաչի և մերթ կապոյտի կոլմն էին բռնում: Դպրոցներում և դատարաններում մարդիկ թողնելով իրանց պարապմունքը, կապոյտ և կանաչ կառքերի մասին էին

վիճում: Փողոցներում, հրապարակներում գրազ էին բռնում, գուշակողների մօտ գնում, կախարհների խորհրդին դիմում և հաւատում էին, թէ նրանք կարող են արագացնել կամ դանդաղեցնել ձիարշաւը:

Վերջապէս հասնում էր ցանկալի օրը: Դեռ ևս լոյսը չը բացւած՝ փողոցները լքուում էին խուռն բազմութեամբ, ամբօխը ներս էր խուժում կրկէսը տեղեր բռնելու համար: Իրարանցումը սարսափելի էր. բղաւում էին, իրար հայհոյում, հարիւրաւոր մարդկանց ոտի տակ տալիս: Մի անգամ ամբօխի աղաղակը մինչև պալատը հասաւ և քնից զարթեցրեց կայսրին: Զայրացած էլագաբալոս կայսր հրամայեց մի խումբ թունաւոր օձեր ձգել ամբօխի մէջ: Միմիայն սեղմելուց և օձերի կծելուց այդ օրը շատերը մեռան: Հանդէսը սկսւում էր կրօնական արարողու-

Թեամբ: Գնացքը դուրս էր գալիս գըլ-  
խաւոր տաճարից: Տանում էին աստ-  
ւածների պատկերները: Հանդիսի հետ  
գնում էին քուրմեր, սպասաւորներ,  
երաժիշտներ, պահապան զօրքեր, զա-  
նազան ծառայողներ, իսկ ամենից ա-  
ռաջ—խաղերի կարգադրիչը: Երբ գնաց-  
քը մտնում էր կրկէսը, փողեր էին հըն-  
չում և աստւածների պատկերները ճօխ  
զարդարւած պատգարակներով մանա-  
ծում հրապարակի շուրջը: Երկրա-  
գործները առանձնապէս ողջունում էին  
երկրագործութեան Յերերա աստւածու-  
հուն, զինւորականները—պատերազմի  
Մարս աստծուն: Եթէ աստուծոյ արձանը  
ցնցւում էր, նոքա ուրախանում էին,  
կարծելով՝ թէ աստւածը ողջունում է  
իրանց: Կայսեր և բարձրաստիճան ան-  
ձանց համար առանձին տեղեր կային  
կրկէսում: Դեռ ևս հանդէսը չը բաց-  
ւած՝ մի խուլ աղմուկ էր բարձրանում

հանդիսականների մէջ, կարծես ծովի  
ալիքների ձայն լինէր: Բոլորի աչքերը  
դարձած էին լինում դէպի դարպասները,  
ուր ոլորած պարանի յետևը փռնչում  
էին կառքերում լծած ձիերը: Կարգա-  
դրիչը տալիս էր սովորական նշանը—իւր  
տեղից դէպի հրապարակն էր ձգում  
սպիտակ թաշկինակը: Պարանը դէն էին  
ձգում, և կառքերը հրապարակ մտնում:  
Շուտով փոշին ամպի պէս բարձրա-  
նում էր և ծածկում կառքերը հան-  
դիսատեսների աչքից: Կառավարները  
կանգնած էին լինում քիչ դէպի առաջ  
կռացած և բարձր ձայնով շտապեցնում  
էին ձիերին: Խաղը կէս ժամից պակաս  
չէր տևում: Շատ անգամ կառապան-  
ները վայր էին ընկնում կառքերից և  
ձիերը քարչ էին տալիս նրանց: Երբեմն  
էլ կառքերը իրար էին դիպչում և  
փշուր-փշում լինում: Այն ժամանակ  
կառքերի բեկորները մարդկանց և ձի-

երի հետ խառնուելով՝ մի արիւնշաղաղ  
կոյտ էին կազմում:

Ձիարչաւը որքան մօտենում էր  
վախճանին, այնքան աւելի անհամբե-  
րութիւն, երկիւղ, բարկութիւն, ուրա-  
խութիւն և կատաղութիւն էր երևում  
հանդիսականների մէջ: Նորա վեր-վեր  
էին թռչկոտում իրանց տեղերից, ծա-  
փահարում էին, բղաւում, դէպ յառաջ  
ընկնում, թաշկինակներով նշան տալիս,  
ձիերին շտապեցնում, վիճում, հայհոյ-  
ում, ատամներ կրրճրտացնում, սպառ-  
նալիք կարգում և վերջապէս ուրա-  
խութեան և յաղթութեան աղաղակ  
բարձրացնում:

Երբ որ հանդէսը նրանց սրտովն էր  
լինում, ոչ շողը և ոչ յորդ անձրևը չէր  
կարող նրանց հեռացնել այնտեղից:

Ձիարչաւը տեսնում էր մինչև կէս  
օր և ապա ընդմիջում լինում: Հան-  
դիսականները կարող էին գնալ իրանց

43-2009  
(4061)

աները ճաշելու:— Բայց շատերը չէին  
գնում՝ վախենալով զրկել տեղից,  
իսկ աւելի մեծ մասը մնում էր ձրի  
հիւրասիրութիւն ընդունելու համար:  
Եւ յիրաւի, սովորութիւն կար կերա-  
կուր բաժանել հանդիսականներին. ըս-  
կզբում միայն հաց և խաշած լոբի էին  
բաժանում, բայց յետոյ կայսրները և խա-  
ղերի կարգադրիչները սկսեցին աւելի  
ճոխ կերակուրներ տալ և երբեմն իրանք  
էլ կրկէտում էին ճաշում: Կայսեր ստ-  
րուկները կողովներով հաց, ուտեստներ  
և գինի էին բաժանում հանդիսական-  
ներին:

### ԳԱԶԱՆՆԵՐ ԿՌՎԵՅՆԵԼԸ

Բայցի կառարչաւից, տօն օրերի սովորական զւարճութիւններից մէկն էլ գաղաններ կուեցնելն էր: Հրապարակն էին թողնում փղեր, ահագին ոնգեղջիւրներ, արջեր, առիւծներ, բորենիներ, ինձեր: Կենդանիների մէջ սկսում էր կեանքի և մահու կռիւ. արեան տեսքից նորա աւելի կատաղում էին և տեսարանը վերջանում էր սարսափելի արիւնհեղութեամբ:

Պատահում էր, որ կարթերով հրապարակից դուրս էին քաշում 800-ից աւելի սպանւած կենդանիների դիակներ: Այդ դիակները ձգում էին ամբօխի առաջը, որը կրկէսում տեղ չը դտներով՝ կանգնած էր լինում նրա սլատերի տակ: Ամբօխը ուրախութեան և շնոր-

հակաբութեան աղաղակներով խլխլում էր արիւնաթաթախ ողորմութիւնը:

Ասպարէզը մաքրում էին դիակներից, արիւնոտ տեղերը աւազ լցնում և նոր զւարճութիւն սկսում: Հրապարակն էին թողնում եղջերուներ, վայրի ձիեր, փղեր, վայրի ցուլեր, ջայլամներ և նրանց որսալու դուրս էին գալիս այն երկրների մարդիկը, որտեղից բերւած էին այդ կենդանիները: Իւրաքանչիւր որսորդ կրում էր այն շորերը և զէնքերը, որ գործ էին ածում իւր հայրենիքում:

Բայց այդ խաղը շուտ էր ձանձրացնում հանդիսատեսներին. նրանք աւելի հետաքրքիր տեսարան էին պահանջում: Եւ ահա որսի փոխարէն սկսում էր օրհասական կռիւ կենդանիների և մարդկանց մէջ: Մարտնչողները լինում էին կամ վարձկաններ, որոնց հովմայեցիները պատերազմների ժա-

մանակ գերի էին բերում զանազան կողմերից, և կամ մահուան դատապարտւած յանցաւորներ:

Նախ հանդէս էին բերում մարդկանց առանց որևէ զէնքի: Խաղը նրանումն էր կայանում, որ նրանք պէտք է գրգռէին կենդանիների զայրոյթը և երբ կենդանիները ընկնում էին նրանց քամակից, նրանք պէտք է փախչէին և խոյս տային հարւածից: Կատաղած կենդանին վերջ ի վերջոյ մարդուն բարձրացնում էր պողերի վերայ և իրանից հեռու շարտում կամ ձգում ոտքերի տակը և կոխկըռտում: Դրանից յետոյ մարտնչողները հանդէս էին գալիս ծածկոցներով և ցանցերով. նրանց վրայ բաց էին թողնում առիւծներ, վագրեր և արջեր: Գաղանները յարձակում էին մարդկանց վրայ, իսկ նրանք պէտք է ճարպիկ կերպով նրանց գլխին ձգէին ծածկոցը կամ ցանցը և փախուստ տային:

Այս խաղը ևս առաւել վտանգաւոր էր. չուտով հրապարակի աւազը ներկում էր մարդկային արիւնով և մարտնչողները ընկնում էին մէկը միւսի յետից:

Պէտք է նորից մտքը և ասպարէզը արիւնից և մարդկանց ու կենդանիների դիակներից: Եւ ահա երևան են գալիս հարիւրաւոր ստրուկներ կարթերով և նոր աւազով: Դիակները քարչ են տալիս և ձգում ասպարէզի տակ դանւող նկուղները:

Սակայն ժամանակ է հանգստանալու և մի այլ բանով զարճանալու: Ասպարէզ էին բերում կորած կանաչ ծառեր և տնկում աւազի մէջ, — կրկէսը հանդիսատեսների աչքին պատկերանում էր ինչպէս մի անտառիկ: Այդ անտառիկն էին քլում եղջերուներ, այծեր, շայլամներ, ձեռնասուն թռչուններ, և զանազան մանր որսեր: Կարգադրիչի նշանով հանդիսատեսները լցւում

էին հրապարակը և իւրաքանչիւրը որ-  
սում էր, ինչ որ ուզում էր, ինչ որ  
կարողանում էր: Բարձրանում էր աղ-  
մուկ, աղաղակ. սկսում էր լեզուակռիւ,  
տուրուզմբոյ: Շատերը վնասում էին,  
նոյն իսկ մեռնում:

Յետոյ կարգադրիչը սկսում էր զա-  
նազան նշաններով մարկեր շաղ տալ:  
Ով որ ձեռք էր բերում այդ մարկերից,  
միւս օրը—նայած մարկի նշանին, ստա-  
նում էր զգեստ, հաց, զանազան կահ-  
կարասիներ. ստանում էին մինչև անգամ  
նաւեր, ամբողջ կալւածներ: Ամենքը  
ձգտում էին մարկ ստանալ—և երեւելի  
մարդիկը, և հարուստները: Նոյն այն  
հպարտ հռովմայեցիները, որոնք ստու-  
րութիւն էին համարում աշխատելը և  
աշխատանքի վարձ ստանալը, այժմ ա-  
րիւնք-քրտինք մտած՝ իրար հրում են,  
իրար հետ կռւում, որպէս զի ուելի  
եղրտ պատառ ձեռք բերեն: Վերջապէս

ամեն բան բաժանւած է և հանդիսա-  
կանները գնում են իրանց տեղերը:

Հանդէսը դեռ ևս վերջացած չէ.  
սպասում են նոր, աւելի հետաքրքիր,  
աւելի արիւնալի, աւելի սարսափելի  
տեսարանի: Ահա հանդէս են գալիս  
հարիւրաւոր, ամեն հասակի մարդիկ.  
այստեղ կան և ծերեր, և երիտասարդ-  
ներ, և կանայք, և երեխաներ, միով  
բանիւ՝ ամբողջ ընտանիքներ: Սրանք  
մահւան դատապարտւած ոճրագործներ  
են: Ի՞նչ մեղք են գործել այս կանայքը,  
փոքրիկ երեխաները, պատանիները, դե-  
ռահաս օրիորդները, զառամեալ ծե-  
րունիները. դրանք քրիստոնեաներ են:  
Դրանց միակ մեղքն այն է, որ հետե-  
ւում են նոր, հռովմայեցիների համար  
անսովոր վարդապետութեան: Քրիստո-  
նեաները քարոզում են սէր դէպի բոլոր  
մարդիկը, նոյն իսկ դէպի թշնամիները  
և ստրուկները. քրիստոնեաները չո

հարստութիւն են վնասուում, ոչ պատիւ, ոչ իշխանութիւն և սիրով կատարում են ամենածանր և ամենաստոր աշխատանքները. նոքա չեն սիրում խաղերն ու հանդէսները. արիւն թափելը մեղք են համարում... Զարմանալի մարդիկ. նրանք ի՞նչպէս են համարձակուում դատապարտել այն բանը, որ այնքան հաճելի ու պատւաբեր է հռովմայեցիների համար. ի՞նչպէս կարող են չընդունել հին հռովմէական ասուածները: Դրանք վնասակար մարդիկ են. թող կորչեն ուրեմն, թող գազանների կերակուր դառնան: Այսպէս էին մտածում հռովմայեցիները, և քրիստոնեաները զոհուում էին Հռովմի կրկէսներում և հռովմէական պետութեան միւս քաղաքներում:

Յանցաւորներին տալիս էին թրեր և դանակներ պաշտպանելու համար, իսկ քրիստոնեաներին յաճախ տասնեակներով կապում էին սիւների վրայ: Հա-

րիւրաւոր քաղցած գազաններ վանդակներից թռչում էին հրապարակը և ագահութեամբ ընկնում զոհերի վրայ: Գազանների ուռնոցը, վիրաւորւածների հեծեծանքը, մարտնչողների աղաղակը, մեռնող քրիստոնեաների աղօթքները և հանդիսատեսների խրախոյսը—այս բոլորը իրար հետ խառնելով՝ մի սարսափելի աղմուկ էին առաջացնում: Այնպիսի հրապարակը մարդկային արիւնով էր ներկուում: Երբեմն այնպէս էր պատահում, որ գազանները չափազանց շատ էին լափում իրանց զոհերը, և հռովմայեցիք չէին կարողանում զւարճանալ արիւնահեղ տեսարանով: Այն ժամանակ սկսում էին բղաւել և պահանջել, որ էլի նոր մարդիկ ձգեն գազանների առաջը: Մի անգամ բոլոր դատապարտւածներն արդէն ընկել էին հրապարակի վրայ. կայսրը հրամայեց մի քսանի չափ մարդ բռնել և ձգել գազանների ա-

ուաջը: Հրամանը կատարուեց: Բայի թշ-  
ւառ զոհերից, ոչ ոք չընդդիմացաւ այդ-  
պիսի հրամանին և տեսարանը շարու-  
նակւեց:

Վերջապէս մութն ընկնում էր և  
վերջ դնում տօն օրւայ անդթութեանը:  
Կարգադրիչի նշանով՝ սուր երկաթէ  
ձողերով գազաններին քշում էին թա-  
կարդները: Հանդիսականները գոհ և  
ուրախ սրտով հեռանում էին. ոմանք  
գնում էին տները հանգստանալու, իսկ  
ոմանք—կայսեր կամ մի որևէ հարուստ  
հռովմայեցու պալատը ճոխ խնջոյքին  
մասնակցերու:

Կրկէսի մօտ գտնուող փողոցները  
դատարկւում էին, բայց դեռ ևս երկար,  
գիշերային խաւարի և լուութեան մէջ  
լւում էին սայլերի անիւների գզր-  
դիւնը, որոնք կրում էին կրկէսում ըն-  
կած մարդկանց մարմինները:

### ԳԼԱԳԻԱՏՕՐՆԵՐԻ ԿՌԻԻԸ

Հռովմայեցիների համար կառար-  
շաւից յետոյ բոլոր զւարճութիւններից  
և ուրախութիւններից ամենասիրելին  
զլադիատօրների կռիւն էր:

Գլադիատօրներ կոչւում էին այն  
մարդիկը, որոնք կեանքի և մահու կռիւ-  
են մղում միմեանց դէմ հասարակու-  
թեանը զւարճութիւն պատճառերու  
համար: Գլադիատօրները կուում էին  
խումբ-խումբ կամ մէկ-մէկ: Իւրաքան-  
չիւր խմբի մէջ լինում էր հարիւրից  
մինչև երեք հարիւր մարդ: Այն ժամա-  
նակ ասպարէզը իսկական կուռի դաշտ  
էր դառնում և կռիւը վերջանալուց  
յետոյ ծածկւում էր սպանւածների  
գիակներով:

160 թւին Ք. Մ. յետոյ, երբ Տրայ-  
անոս կայսրը չորս ամիս շարունակ տօնեց

Դունայի վրայ գտնւած երկրների տիրապետութիւնը, այդ տօներին կուում էր տասը հազար գլադիատօր:

Ո՞րտեղից էին հաւաքում հոովմայեցիք գլադիատօրներին. նրանց ընտրում էին սարուկներից, ծանր յանցանքների համար մահւան դատապարտւած յանցաւորներից և մեծ մասամբ պատերազմների ժամանակ բերած գերիներից: Հոովմէական զօրապետները իւրաքանչիւր տարի հազարաւոր այդպիսի գերիներ էին բերում: Ուժեղ և հպարտ գերիներին, որոնց չէին կարող խօնարհ սարուկներ շինել, սովորաբար ստիպում էին գլադիատօր դառնալ:

Ասենք՝ լինում էին և այնպիսիները, որ իրանց կամքով գլադիատօր էին լինում: Երանք այնպիսի յանդուգն մարդկանցից էին, որոնք կամ գլադիատօր էին դառնում, կամ աւագակների, մարդասպանների խմբի մէջ մտնում: Կեանքի

ուրիշ ասպարէզ նրանք չէին ճանաչում: Գլադիատօրների համար կային առանձին կազարմաներ, դպրոցներ: Նրանց սովորեցնում էին, խնամքով պահում ու կերակրում, բայց խիստ և անողոր էին վարում հետները: Նրանց մասին հոգս էին քաշում ոչ իբրև մարդկանց մասին, այլ անասունների, որոնց պատրաստում էին մորթելու համար:

Գլադիատօրներից շատերն ընտելանում էին իրանց վիճակին, պարծենում իրանց ուժով ու ճարպիկութեամբ և անհամբեր հրամանի էին սպասում, որ հրապարակ դուրս գան: Իսկ միւսները չէին կարողանում տանել գերութիւնը, հաշտւել այդ խայտառակ գրութեան հետ և աշխատում էին փախչել և կամ ինքնասպանութեամբ վերջ դնել իրանց կեանքին: Շատ անգամ նրանք հրաժարւում էին կոււելուց: Հանգիստ տեսները բղաւում, զայրանում էին և

անհնազանդներին կապոտում կուողներ  
 րի հետ: Ընդհանուր իրարանցման մէջ  
 միւսների հետ ընկնում էին և այս կա-  
 պոտած զոհերը:

Կազարմայում ըմբոստ գլադիա-  
 տորներին շղթայած էին պահում: Կա-  
 րելի է պատկերացնել, թէ ինչպիսի  
 անձկութիւն էին զգում գերիները, երբ  
 մտաբերում էին իրանց հայրենիքը, ի-  
 րանց հողը, որտեղ նրանք ազատ պատ-  
 ւաւոր մարդիկ էին, որտեղ թողել էին  
 իրանց տունը, ընտանիքը: Մի հռով-  
 մայեցի մատենագիր ասում է, որ մի  
 անգամ մի խումբ գերիներ բերին գլա-  
 դիատորների կազարմաները—ազատա-  
 սէր, քաջամարտիկ սաքսոնցիներ (գեր-  
 մանական ցեղ): Ոչ խարազանը, ոչ շղ-  
 թաները և ոչ տաքացրած երկաթը չը  
 կարողացան խոնարհեցնել նրանց: Հասա-  
 տօն օրը, և այդ հպարտ սաքսոնցիներին  
 ևս հրամայեցին հրապարակ դուրս գալ

կուելու: Հէնց որ նորանց դուրս բերին  
 կազարմայի բազը և շղթաները քան-  
 դեցին, նրանք յարձակեցին միմեանց  
 վրայ և սկսեցին խեղդօտել: Նրանք  
 նախօրօք խորհուրդ էին արել այդպի-  
 սով ազատել խայտառակ մահից, որ  
 պիտի տեղի ունենար կրկէսում:

Մի այլ մատենագիր գլադիատոր-  
 ների կեանքից բերում է հետեւեալ  
 դէպքը: Մի երիտասարդ ստրուկ գլա-  
 դիատոր, երբ իրան կրկէս էին ա.ս ում  
 կառքով, քնկոտ ձեւացաւ, նորա գլուխը  
 մերթ այս և մերթ այն կողմն էր խո-  
 նարհում: Յարմար ժամանակ գտնելով,  
 երբ պահտպանները յետ էին մնացել,  
 թշւառականը գլուխը ցածրացրեց մինչև  
 անիւը և նա կտրեց նրա վիզը: Նոյն  
 իսկ սյդ դառն մահը նա բարձր համա-  
 րեց կրկէսի խայտառակ մահից կամ  
 յաղթութիւնից: Այս երկու օրինակը  
 բաւական է, որպէս զի հասկանանք, թէ

ինչպիսի հոգեկան տանջանքներ էին կրում գլադիատորները, ինչպիսի յուսահատութեան մէջ էին ընկնում նրանք:

Գլադիատորներին դուրս էին բերում հրապարակ հանդիսաւոր կերպով, շարք-շարք: Նոցա կանգնեցնում էին կայսեր նստած տեղի առաջը և դիմում էին նրան հետևեալ խօսքերով. «Փառք ու պատիւ քեզ, կայսր, գէպի մահ գնացողները ողջունում են քեզ»: Կռիւը սկսում էր կարգադրիչի նշանով: Նախ կռւում էին փայտէ գէնքերով, մէկը միւսին գերազանցում էր իւր ուժով և ճարպկութեամբ, բայց այդ շուտ էր ձանձրացնում հանդիսատեսներին: Այն ժամանակ կարգադրիչը հրամայում էր գլադիատորներին վերցնել ցանցեր, եռաժանիներ և պարաններ: Գլադիատորը պէտք է ճարպկութեամբ հակառակորդի վերայ ձգէր ցանցը կամ պարանը: Ամբօխը բարձր աղաղակներով խրա՛սուսում

էր նրանց: Վերջապէս կարգադրիչը հրամայում էր սուր զէնք վերցնել: Այդ հրամանին հետևում էր երաժշտութեան բարձր ձայնը, բայց փողերից աւելի բարձր լուում էին հանդիսականների ուրախ աղաղակները: Գլադիատորների հետ ի միասին հրապարակ էին ելնում և վերակացուները խարազաններով և երկար ձողերով. մի անկիւնում շարում էին մանղալները: Վերակացուները պարտական էին առաջ մղել անփոյթներին, իսկ անհնազանդներին ու վախկոտներին առաջ էին քշում մանղալների վերայ շիկացրած երկաթէ ձողերով: Հանդիսականները բարձր ձայնով գովում կամ պախարակում էին մարտնչողներին:

Երբեմն քաջ և ճարպիկ մարտնչողը այնքան էր դուր գալիս հանդիսատեսներին, որ նոքա խնդրում էին կայսրին կեանք և ազատութիւն պարգևել նրան:

Բայց դէպի յաղթւածը ոչ կարեկցու-  
թիւն կար և ոչ գթութիւն: Սովորու-  
թեան համեմատ յաղթողը սպասում  
էր նշանի, որ սպանէ յաղթւած ախո-  
յեանին:

Եթէ ալ ձեռքի մեծ մատը դէպի  
ցած թողնէին, այդ նշանակում էր, որ  
ժողովուրդը մահ է ուզում: Եւ այդ  
հրամանը իսկոյն և եթ կատարում էր  
յաղթողը:

Ընդամիջումների ժամանակ ծառա-  
ները կարթերով հրապարակից քար-  
չում էին սպանւածներին, թիերով մաք-  
րում էին արիւնոտ տեղերը և մաքուր  
աւազ լցնում: Նրանք, որոնք դեռ ևս  
բոլորովին չէին մեռել հրապարակում,  
մեռնում էին նկուղներում, ուր լցնում  
էին մեռնողների դիակները:

Ամբոխը հրճուում էր և բարձրա-  
ձայն արտայայտում իւր հաճութիւնը:  
Մեծ թէ փոքր, կին թէ տղամարդ,

հասարակ թէ երևելի—ամենքն էլ զու-  
ւարճանում էին այդ արիւնահեղ տե-  
սարանով: Նրանց մասին նոյնքան էին  
խօսում, որչափ և կառարչաւներէ մասին:

Հարիւրաւոր քրիստոնեաներ էին  
զոհուում հոովմէական պետութեան զա-  
նազան քաղաքների կրկէսներում, բայց  
քրիստոնէական վարդապետութիւնը իւր  
գործը կատարում էր: Քրիստոսին հե-  
տևողների քաջերի մահը կրկէսներում,  
նրանց հեզ վերաբերմունքը դէպի ի-  
րանց հալածողները և ջերմ քարոզները  
անգութ ու պարապ ժողովրդի մէջ  
զարթեցնում էին խիզճ, կարեկցութեան  
զգացմունք: Հոովմայեցոյ մէջ աւելի  
սկսեցին երևան գալ այնպիսի մարդիկ,  
որոնք չէին գնում կրկէսները, ամֆի-  
թէատրոնները և զըւանք էին զգում  
դէպի այդ սպանդանոցները: Բայց այն-  
պիսիները շատ չէին. կրկէսները դեռ  
ևս լիքն էին սիրողներով:

Մի մատենագիր Հոնորիոս կայսեր  
 թագաւորութեան ժամանակ գրել է  
 հետեւեալ անցքը: Տօնի ժամանակ, գլա-  
 դիատօրների կոււի ամենատաք ըսպէին  
 հրապարակ դուրս եկաւ մի սպիտա-  
 կահեր ծերունի—քրիստոնեայ: Նա փու-  
 թաց դէպի գլադիատօրը, որը ուզում էր  
 վերջին մահացու հարւածը հասցնել  
 հակառակորդին: Ծերունին բռնեց նրա  
 ձեռքը և դառնալով դէպի գլադիատօր-  
 ները և հանդիսատեսները, աղաչում էր,  
 որ նրանք թողնեն արիւնահեղութիւնը,  
 հետեւեն Քրիստոսին, գթութիւն ունե-  
 նան դէպի մերձաւորները և ոչ մի ջանք  
 չը խնայեն նրանց օգտին ծառայելու:  
 Ծերունու երևան գալը այնպէս  
 անսպասելի էր, որ սկզբում հանդիսա-  
 տեսները սառած մնացին, բայց յետոյ  
 ուշքի գալով սկսեցին բղաւել և զայ-  
 րանալ նրա վրայ: Ծերունի Տելեմաքը  
 չէր լուում: Նա շարունակում էր իւր

քարոզը և արգելում գլադիատօրնե-  
 րի կուիւր: Այն ժամանակ հանդիսա-  
 տեսները այնպէս կատաղեցին, որ տեղն  
 ու տեղը քարերով սպանեցին ծերունի  
 Տելեմաքին, և մեռած քարոզչի դիակի  
 շուրջը նորից սկսեց եռ գալ գլադիատօր-  
 ների կուիւր:

Այդ տօնից յետոյ Հոնորիոս կայսրը  
 հրամայեց ընդ միշտ վերացնել Հռով-  
 մում գլադիատօրների կուիւր: Սակայն  
 հռովմայեցոց մէջ այնքան ուժեղ էր  
 սէրը դէպի այդպիսի տեսարանները,  
 որ յետագայ կայսրները դարձեալ սկը-  
 սեցին թոյլ տալ: Միայն Յիսուս Քրիս-  
 տոսից 500 տարի յետոյ ընդմիշտ դա-  
 տարկեցան Կօլիզէի—այն մեծ ամֆի-  
 թէատրօնի պատերը, որտեղ այնքան  
 հազարաւոր մարդիկ էին զօհել:

Անգութ ամբօխի աղաղակների և  
 մեռնողների հեծեծանքի փոխարէն այն-  
 տեղ գերեզմանական լուութիւն տիրեց:

Հրապարակի վրայ ընկած քրիստոնեա-  
 ների յիշատակը յաւերժացնելու համար  
 տաճարներ շինեցան. Կօլիզէյը հռով-  
 մայեցիների և միւս ազգերի անցած  
 կեանքի մահարձանն է: Այդ մահար-  
 ձանը յիշեցնում է մեզ, որ կրթւած  
 ազգերի համար ընդմիջտ անցել է  
 այն ժամանակը, երբ պատերազմը, պա-  
 տերազմական աւարը ամենալաւ և  
 պատուաբեր միջոցն էր համարուում հա-  
 ըրստանալու, երբ աշխատանքը արհա-  
 մարւած էր, երբ իւրաքանչիւր օտար  
 ցեղի պատկանող մարդու թշնամի էին  
 ընդունում, որին կամ սպանում էին,  
 կամ ստրուկ դարձնելով ամեն կերպ  
 չարչարում և աշխատեցնում: մար-  
 դիկ, ամբողջ ազգեր չէին հասկանում  
 այն բանը, թէ ամեն մի մարդ, ինչ  
 ցեղի էլ պատկանի, ինչ լեզուով էլ  
 խօսի—բոլոր միւս մարդկանց համար

ոչ թէ թշնամի է, այլ եղբայր,  
 մեր ձաւոր:

Կօլիզէյ ամֆիթէատրօնի պատերը  
 մինչև օրս էլ կանգուն են: Իւրաքան-  
 չիւր տարի հարիւրաւոր ճանապար-  
 հորդներ, երբ այցելում են Հռովմը,  
 դալիս են տեսնելու այդ տեղը: Հռովմը  
 անւանում են «յաւիտենական քաղաք»:  
 Քրիստոսից մի քանի հարիւր տարի առաջ  
 այդ հզօր հռովմէական պետութեան  
 մայրաքաղաքն էր: Ապա այդ քաղաքից  
 Հռովմի պապը, կաթօլիկ եկեղեցու  
 գլուխը, կառավարում էր բոլոր կաթօ-  
 լիկ պետութիւնների հոգեւոր և աշ-  
 խարհային գործերը: Այժմ՝ Հռովմը ի-  
 տալական թագաւորութեան մայրա-  
 քաղաքն է, իսկ իտալացիք հին հռով-  
 մայեցոց շառաւիղներն են համարում:





ՀՀ Ազգային գրադարան



NL0585755

ՀՀ Ազգային գրադարան



NL0585754

